

25.07.2008

Այցելություն Վայոց Ձորի մարզ

Վայոց Ձորում ՀՄՀ-Հայաստանի ներկայացուցիչները եղան երկու ցուցադրական տեղամասում, որոնց հետ համագործակցում է Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում: **Վերնաշեն համայնքում** տեղակայված ցուցադրական տնտեսությունը հագեցած է կաթիլային և միկրոանձրևացման ոռոգման համակարգերով, որը նպաստում է տնտեսական առումով առկա ջրի ավելի լավ օգտագործմանը, պարարտանյութերի և աշխատանքի խնայողությանը: Ֆերմեր Աղասի Բաղդասարյանի դաշտում տեղադրված են ոռոգման երկու համակարգեր: Երկուսն էլ նախագծվել են «Կաթիլ Ակ» ՍՊԸ-ի կողմից Ջրի ներտնտեսային կառավարում բաղադրիչի օժանդակությամբ:



ա. Կաթիլային ոռոգման համակարգ խաղողի համար: Համակարգը բաղկացած է 98 շարքից, յուրաքանչյուրը՝ 50մ երկարությամբ:

բ. Միկրոանձրևացման ոռոգման համակարգ պտղատու այգու համար, որը բաղկացած է 20 շարքից, յուրաքանչյուրը՝ 28մ երկարությամբ:

Ոռոգման համակարգերի տեղադրման արդյունքում լուծվել է վերոնշյալ այգիներում ջրի երբեմնի անբավարարության խնդիրը:

Միկրոանձրևացման համակարգի դեպքում, ֆերմերը փորել է 140մ երկարությամբ առվափոս խողովակի համար: Կաթիլային համակարգի դեպքում ֆերմերը տրամադրել է 270մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակաշար 63մմ տրամագծով: Ֆերմերը նաև փորել է առվափոս այդ խողովակի համար և տրամադրել է 4 աշխատող տեղադրման աշխատանքների համար:

Աղավնաձոր համայնքում ֆերմեր Վահրամ Մաթևոսյանը ևս կաթիլային ոռոգման համակարգ է ներդրել: Մա թույլ է տալիս, որպեսզի ֆերման ունենա ջրի, աշխատանքի խնայողություն և ոռոգման ջրի ավելի հավասարաչափ բաշխում:

Ոռոգման համակարգը բաղկացած է 100 մ երկարությամբ 17 շարքերից, 0.45 հա խաղողի այգում 1400 խաղողի վազերի ոռոգման համար: Ոռոգման բուն համակարգը բաղկացած է պոլիէթիլենային խողովակներից և կաթոցիկներից – 1 կաթոցիկ յուրաքանչյուր բույսի համար:



Համակարգը նախագծվել է հմուտ անհատի կողմից Ջրի ներտնտեսային կառավարման բաղադրիչի օժանդակությամբ: Համակարգի տեղադրման աշխատանքները իրականացրել է կատարողը՝ ֆերմերի օգնությամբ: Ֆերմերը տեղադրել է 70 մ մոտեցնող խողովակաշար, որը սկիզբ է առնում ճնշումային խողովակաշարից և ապահովել է չորս աշխատողներով, որոնք օգնել են համակարգի հավաքման աշխատանքներին: